

ԸՇ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ԸՇ ԳԱԱ-ում անցկացվեց «Աստղագիտական շրջահայություններ և մեծ տվյալներ-3» միջազգային գիտաժողովը

Ս/թ. սեպտեմբերի 15-19-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացավ «Աստղագիտական շրջահայություններ և մեծ տվյալներ-3» (ASBD-3) միջազգային գիտաժողովը՝ նվիրված Մարգարյանի շրջահայության (FBS) 60-ամյակին և Հայկական վիրտուալ աստղադիտարանի (ArVO) 20-ամյակին:

Գիտաժողովին մասնակցեցին շուրջ 7 տասնյակ գիտնականներ և հետազոտողներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իսպանիայից, Իտալիայից, Իրանից, Լյուքսեմբուրգից, Հայաստանից, Մեծ Բրիտանիայից, Նիդեռլանդներից, Չինաստանից, Պակիստանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը: Նա նշեց, որ մեծ տվյալների շրջահայությունները զարգացնում են միջգիտական համագործակցությունը, նպաստում ոլորտի հետազոտական գործունեությանը և հեռանկարներն ուրվագծելուն, խրախուսում գիտական գործընկերություններ:

ՀՀ ԳԱԱ նախագահին ասաց, որ աստղադիտարանը ճանաչվել է ՀՀ ազգային արժեք 2013 թվականին, Միջազգային աստղագիտական միության տարածաշրջանային աստղագիտական կենտրոն՝ 2015 թվականին և

Նշանավոր աստղագիտական ժառանգություն՝ 2021 թվականին: Այստեղ է գտնվում տարածաշրջանի խոշորագույն աստղադիտակներից մեկը՝ 2.6մ հայելիով աստղադիտակը, և աշխարհի խոշորագույն լայնանկյուն, 20-րդ դարի ամենաարդյունավետ աստղադիտակներից մեկը՝ Շմիդտի համակարգի 1մ աստղադիտակը: 2005 թվականին ստեղծվել է Հայկական վիրտուալ աստղադիտարանը, որն այս ոլորտում Հայաստանը դարձնում է աշխարհի 20 կարևորագույն երկրներից մեկը:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ: Զննարկվեցին պատմական ու ժամանակակից աստղագիտական տվյալները, տվյալների թվայնացման ու արխիվացման գործընթացները, մեծ տվյալների կիրառությունը, վիրտուալ աստղադիտարանները, վերլուծական գործիքները և այլ թեմաներ:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը, Հայկական աստղագիտական ընկերությունը (ArAS), Հայկական վիրտուալ աստղադիտարանը (ArVO), Միջազգային աստղագիտական միության Հարավարևմտյան և Կենտրոնական Ասիայի աստղագի-



տության զարգացման տարածաշրջանային գրասենյակը (SWCA ROAD)՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և ՀՀ ԳԱԱ-ի համագործակցությամբ:

ASBD գիտաժողովը Հայաստանում անցկացվում է երրորդ անգամ: Առաջին երկուսն անցկացվել են 2015 և 2020 թվականներին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Բյուրականյան տարածաշրջանային 4-րդ ամառային դպրոցը

Ս/թ. սեպտեմբերի 8-ից 12-ը ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում կազմակերպվեց Բյուրականյան տարածաշրջանային 4-րդ ամառային դպրոցը՝ «Աստղագիտությունը և տվյալագիտությունը» (4RASS) խորագրով:

Այն կազմակերպվել էր Բյուրականի աստղադիտարանի, Միջազգային աստղագիտական միության Հարավարևմտյան և Կենտրոնական Ասիայի աստղագիտության զարգացման տարածաշրջանային գրասենյակի (SWCA ROAD), Հայկական աստղագիտական ընկերության (ArAS), Հայկական վիրտուալ աստղադիտարանի (ArVO) և ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից:

Դասախոսների շարքում ընդգրկված էին միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ ԱՄՆ-ից, Գերմանիայից, Իսպանիայից, Նիդեռլանդներից, Չինաստանից, Ֆրանսիայից: Դպրոցին մասնակցեցին երիտասարդ գիտնականներ և ուսանողներ Գերմանիայից, Եթովպիայից, Իրանից, Լեհաստանից, Հայաստանից, Ղազախստանից, Ռուսաստանից, Վրաստանից:

Ամառային դպրոցը ներառում էր աստղագիտության և տվյալագիտության ոլորտի հիմնական ուղղությունները՝ դիտողական աստղագիտություն և տվյալների վերլուծություն, մեծ տվյալների կիրառություն, աստղագիտական շտեմարանների և Վիրտուալ աստղադիտարանների օգտագործում, գիտական գրագրության հմտությունների զարգացում: Դպրոցի մասնակիցները հնարավորություն ունեցան իրականացնելու դիտումներ ԲԱ-ի 2.6 մ խոշորագույն և 1 մ տրամագծով աստղադիտակներով, մասնակցեցին գործնական սեմինարների, ծանոթացան աստղագիտական դիտումների շտեմարաններին, արխիվներին և Վիրտուալ աստղադիտարանի գործիքներին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան արևմտագիտության ինստիտուտը 70 տարեկան է

Ս/թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Տնտեսության նորաստեղծական զարգացման և ռազմավարական կառավարման հիմնահարցերը» միջազգային գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հիմնադրման 70-ամյակին:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը շեշտեց Տնտեսագիտության ինստիտուտի ներուժի օգտագործման կարևորությունը երկրի տնտեսական, սո-



ցիալական համաչափ զարգացման գործում:

«Գիտաժողովի թեման ընդգծում է երկու կարևոր հանգամանք՝ տնտեսության ռազմավարական կառավարման անհրաժեշտությունը և նորաստեղծական զարգացման կարևորությունը: Եական է, որ զարգացման տնտեսության հատկապես գիտատար ճյուղերը: Ամբողջ երկիրը պետք է դիտել որպես մեկ համապարփակ համակարգ, որի մեջ են թե՛ տնտեսությունը, թե՛ գիտությունը, թե՛ կրթությունը: Մենք պետք է ունենանք գիտության վրա հիմնված տնտեսություն: Գիտությունը պետք է սերտորեն շաղկապվի բարձր տեխնոլոգիաների հետ, ծառայի տնտեսության զարգացմանը, լուծի անվտանգային հարցեր», - ասաց Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Մերի Մանուչարյանը նշեց՝ ինստիտուտը տնտեսագիտական դպրոցի ավանդույթների գլխավոր կրողն է: «Մեր հիմնադիրների և նրանց հաջորդների ջանքերով ինստիտուտը միշտ եղել է ոչ միայն տեսական հետազոտությունների կենտրոն, այլ նաև կիրառական

կարևոր լուծումների մշակման հենակետ: Մենք միշտ ձգտում ենք պահպանել ակադեմիկոս Քոթանյանի պահանջկոտությունը, գիտական խորությունը: Այսօրվա գիտաժողովի թեման՝ տնտեսության, նորաստեղծական զարգացման և ռազմավարական կառավարման հիմնահարցերը, չափազանց խորհրդանշական են: Այն միավորում է մեր հարուստ անցյալի դասերը և ներկայի ու ապագայի մարտահրավերները: Մենք գիտենք, որ ժամանակակից աշխարհում տնտեսական զարգացումն անխուսափելիորեն կապված է նորարարությունների, տեխնոլոգիական առաջընթացի, մարդկային կապիտալի և արդյունավետ կառավարման հետ: Այսօր, երբ մեր հանրապետությունը կանգնած է նոր զարգացման և կայունության հնարավորությունների առջև, գիտնական տնտեսագետների դերը որպես հիմնարար և կիրառելի գիտելիքի աղբյուրի, շատ կարևոր է: Եվ այս գիտաժողովը հիմնալի հնարավորություն է՝ փոխանակելու գիտական նոր գաղափարներ, քննարկելու մեր տնտեսության առջև ծառացած կառուցվածքային խնդիրները և համատեղ որոնելու լուծման ուղիներ: Մեր նպատակը ոչ միայն ակադեմիական քննարկումներ վարելն է, այլև կոնկրետ առաջարկներ մշակելը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության նորաստեղծական ներուժի բացահայտմանը և դրա կառավարման արդյունավետության բարձրացմանը», - ասաց Մերի Մանուչարյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին և շնորհավորական ուղերձներ հղեցին հայաստանյան և արտասահմանյան գործընկեր կառույցների ղեկավարները: Ինստիտուտի տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության բաժնի վարիչ պրոֆեսոր Ռոբերտ Սարինյանը ներկայացրեց «ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հետադիժը» թեմայով զեկուցումը:

Գիտաժողովի շրջանակում սեպտեմբերի 16-17-ին ինստիտուտում ներկայացվեցին 36 գիտական զեկուցումներ, որոնք վերաբերում էին մակրոտնտեսական ցուցանիշների զարգացման միտումներին, ֆինանսական քաղաքականության առաջնահերթություններին, ռազմավարական կառավարմանը, նորաստեղծական զարգացմանը, տնտեսության իրական հատվածի, ծառայությունների ոլորտի զարգացման առաջնահերթություններին և խնդիրներին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Ս/թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Բուհաբանության և ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Ալվարո Անտոնյանը:

Ալվարո Անտոնյանը ՀՀ ԳԱԱ Բուհաբանության և ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվել է 2022 թվականին: Նա ներկայացրեց 2022-2025 թթ. իր ղեկավարությամբ կատարված աշխատանքները: Նշված ժամանակահատվածում ինստիտուտի համար դժվար շրջանում, իրականացվել են գիտական և ենթակառուցվածքի պահ-

ՀՀ ԳԱԱ Բուհաբանության և ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Ալվարո Անտոնյանը

պանման բազմաթիվ աշխատանքներ: Այդ ընթացքում ինստիտուտի աշխատակիցները հրապարակել են մոտ 80 գիտական հոդված, որի ավելի քան 70 տոկոսը՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում: Աճել է ինստիտուտի բազային ֆինանսավորումը, և ավելացել դրամաշնորհների թիվը: Ինստիտուտը համագործակցում է արտասահմանյան ու տեղական մի շարք համալսարանների և կազմակերպությունների հետ, կնքվել են հռչակագրեր:

Ներկայացնելով ինստիտուտի զարգացման ծրագիրը՝ Ալվարո Անտոնյանը նշեց կարևոր առաջնահերթությունները.

- տարբեր պաթոլոգիաների դեպքում թիրախային թերապիայի նպատակով ստեղծել դեղերով և թիրախային բջիջները ճանաչող մոլեկուլներով բեռնված նանո-դեղամիջոցների տրանսպորտային համակարգեր,

- արթրիտների պաթոլոգիայում պոլիկլոնալ հակամարմինների կիրառմամբ հետազոտություններից և բջջային կուլտուրաների հետ աշխատանքի փորձից ելնելով ստանալ մոնոկլոնալ հակամարմին-

ների թեթևացնելու ինստիտուտի ֆինանսական բեռը,

- զարգացնել Ալցհեյմերի, Պարկինսոնի և կենտրոնական նյարդային համակարգի պաթոլոգիաների որոշ մեխանիզմների բացահայտման ուղղված ուսումնասիրությունները,

- շարունակել բնական և սինթետիկ միացությունների ազդեցության հետազոտությունները շաքարախտի և արյան մակարդեղիության դեպքում,

- ստեղծել հակաբորբոքային և հակա-շաքարախտային պատրաստուկներ և քսուքներ հավելումների ձևով,

- մոր մակարդակի վրա դնել կարևոր նշանակության սպիտակուցների հետ պրո-լիմոլ հարուստ պեպտիդների և պրոբիոտիկների փոխազդեցության կիրառական հետազոտությունները:

Ալվարո Անտոնյանը ծնվել է 1964 թ. Երևան քաղաքում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը կենսաքիմիա մասնագիտությամբ: Աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Բուհաբանության և ազգագրության ինստիտուտում և 1996 թ. ստացել կենսաբա-

նական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ղեկավարում է «Ադեմիլային միացությունների նյութափոխանակության» լաբորատորիան: Նրա ղեկավարությամբ և մասնակցությամբ լաբորատորիան ստացել է բազմաթիվ տեղական և միջազգային դրամաշնորհներ: 2007 թ.-ից դասավանդում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեղագործական քիմիայի ամբիոնում և ունի դոցենտի կոչում:

Համատեղ գիտական հետազոտություններ է իրականացնում Իտալիայի Կամերինոյի համալսարանի, Գերմանիայի Բեռլինի Ազատ և Շարիտե բժշկական համալսարանների, Հավլեի Ֆրաունհոֆերի Բջջային թերապիայի և իմունոլոգիայի ինստիտուտի, Շվեյցարիայի Ֆրիբուրգի համալսարանի հետ: Ալվարո Անտոնյանի գիտական հետազոտությունների ոլորտներն են կենսաքիմիան, կենսաֆիզիկան և կենսաբժշկությունը: Նա 52 գիտական աշխատության հեղինակ է: Անդամակցում է Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիային և Նյարդաքիմիայի եվրոպական միությանը:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արսեն Բոբոխյանը



Ս/թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց պատմական գիտությունների դոկտոր Արսեն Բոբոխյանը:

Արսեն Բոբոխյանը ներկայացրեց 2022-2025 թթ. իր ղեկավարման ժամանակ, կատարված աշխատանքները և ինստիտուտի զարգացման ծրագիրը: Ինստիտուտը տարեկան ունեցել է 30 հնագիտական արշավախումբ, որից 17-ը՝ միջազգային համատեղ ծրագրերով:

Իրականացվել են տարաբնույթ գտածոների վերականգնում ու թանգարանացում, Հայաստանի նյութական և ոչ նյութական ժառանգության համրահռչակում,

հնագիտական, ազգագրական և բանահյուսական նյութերի մեծածավալ ուսումնասիրություններ, Արցախի վերաբերող խնդիրների քննարկում, պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն և մշտադիտարկում: Ինստիտուտը հրապարակել է ավելի քան 200 գիտական հոդված, որից ավելի քան 30-ն ընդգրկված են միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում: Տեղի է ունեցել բազային ֆինանսավորման և արտաբյուջեի աճ: Պայմանագրեր են կնքվել Ռուսաստանի, Բելառուսի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Չինաստանի, Գերմանիայի գիտական կենտրոնների և համալսարանների հետ:

Արսեն Բոբոխյանը նշեց, որ շարունակվելու են աշխատանքները՝ ուղղված գիտական արդյունավետության բարձրացմանը, 2026 թ. ատեստավորման նախապատրաստմանը, ինստիտուտի կարգավիճակի պահպանմանը, ամփոփագրերի փոփոխությունների դեպքում՝ ինստիտուտի դիրքերի շահավետ պահպանմանը:

Արսեն Բոբոխյանը ծնվել է 1975 թվականին Երևան քաղաքում: 1992-1997 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, 1997-1999 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ:

1999-2000 թթ. սովորել է Սյունիքի համալսարանի Առաջավորասիական հնագիտության ինստիտուտում, 2001-2006 թթ. Գերմանիայի Թյուբինգենի համալսարանի Նախապատմության ինստիտուտում:

2000 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2006 թ. Գերմանիայի Թյուբինգենի համալսարանի Նախապատմության ինստիտուտում ստացել է փոխոսկայության դոկտորի կոչում: 2016 թ. Երևանի պետական համալսարանում ստացել է դոցենտի կոչում: 2024 թ. ստացել է պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

Արսեն Բոբոխյանի գիտական հետազոտությունների ոլորտներն են՝ առաջավոր ասիական և կովկասյան հնագիտություն, Հայկական լեռնաշխարհի բրոնզի և երկաթի դարերի հնագիտություն, մշակութային կապեր, փոխանակություն, կշռային համակարգեր, հնագույն կրոն և պաշտամունք, սրբազան լանդշաֆտ:

Նա 273 գիտական հոդվածի, 12 գրքի հեղինակ է: Ազատ տիրապետում է մի շարք օտար լեզուների:

1998 թ. մինչ օրս նա աշխատում է ՀՀ

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում՝ կրտսեր գիտաշխատողից հասնելով մինչև ինստիտուտի տնօրենի պաշտոնի: 2007թ.-ից դասավանդում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, 2020 թ.-ից՝ Հայաստանի ամերիկյան համալսարանում, իսկ 2014-2021 թթ. դասավանդել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

2015-2017 թթ. եղել է «Էջմիածին» համ-դեսի գլխավոր խմբագիր, 2017-2024 թթ.՝ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրի տեղակալ, 2025 թվականից՝ գլխավոր խմբագիր: Արտասահմանյան գիտական մի շարք համ-դեսների խմբագրական խորհուրդների անդամ է:

Արսեն Բոբոխյանը 2011 թ.-ից անդամակցում է Հայկական ուսումներու միջազգային ընկերակցությանը (Օքսֆորդ), 2020թ.-ից՝ Միջերկրական և արևելյան հետազոտությունների միջազգային ասոցիացիային (Հռոմ), 2023թ.-ից՝ Գերմանական հնագիտական ինստիտուտին (Բեռլին), 2025թ.-ից՝ Լենինգրադի հնագիտական ինստիտուտին (Բուրգոն):

2017 թվականին արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալի:

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Ռաֆիկ Արամյանը



Ս/թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Արամյանը:

Ռաֆիկ Արամյանը նշեց, որ ինստիտուտի առաջնահերթություններից են գիտական ուղղությունների պարբերական գնահատումը, արդիական, կիրառական ուղղվածությամբ գիտական հետազոտությունների և մշակումների զարգացումը:

Ներկայացնելով իր ղեկավարության օրոք Մաթեմատիկայի ինստիտուտի վերջին 3 տարիների գործունեությունը՝ Ռաֆիկ Արամյանը նշեց, որ ավելացել է բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում (Scopus, Web of Science) ինստիտուտի

աշխատակիցների հոդվածների քանակը: 2022 թ. միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում հրապարակվել է 21 հոդված, 2023 թ.՝ 23, իսկ 2024 թ.՝ 36 հոդված:

Մաթեմատիկայի ինստիտուտում կազմակերպվել են մի քանի խոշոր միջազգային գիտաժողովներ: Մասնավորապես ներք աճում «Օպերատորների տեսություն և հարմոնիկ անալիզ» գիտաժողովը (OTHA 23, 24, 25)՝ Ռուսաստանի Դաշնության Հարավային դաշնային համալսարանի հետ համատեղ: Անցկացվել է Հիմնարար և կիրառական մաթեմատիկայի միջազգային կենտրոնի (Centre International de Mathematiques Pures et Appliquees, CIMPA) ամառային գիտական դպրոցը:

Կազմակերպվել է Գերազանցության դպրոց: «Գերազանցության դպրոցի աշխատանքը շատ հաջողված է և անպայման պետք է շարունակել: Նաև և անհրաժեշտ է շարունակել աջակցել տարբեր գիտակրթական աշխատանքների իրականացմանը, հասնել ասպիրանտուրայի տեղերի ավելացմանը, իրականացնել գիտական կադրերի պատրաստում և ինստիտուտի համալրում երիտասարդ գիտնականներով, խորացնել գիտական համագործակ-

ցությունն օտարերկրյա համալսարանների և գիտական կենտրոնների հետ», - ասաց Ռաֆիկ Արամյանը: Նա կարևորեց գիտության հանրայնացումը, միջազգային համագործակցության ընդլայնումն ու խորացումը, կիրառական ու նորարարական գիտահետազոտական աշխատանքների ու գիտատեխնոլոգիական մշակումների խթանումը:

Խոսելով անելիքների մասին՝ Ռաֆիկ Արամյանը նշեց, որ նպատակ ունեն նաև ձեռնարկությունների հետ ձևավորել համագործակցության կայուն համակարգ, ստեղծել վիճակագրության և էկոնոմետրիկայի գծով հետազոտողների խումբ և սկսել խորհրդատվական գործունեություն: Ստեղծվել է հարթակ, որտեղ կարող են դիմել ՏՏ ոլորտի կազմակերպությունները՝ մաթեմատիկական խնդիրների լուծման և խորհրդատվության համար: «Ինստիտուտի գործունեության կարևոր բաղադրիչներից են լինելու նաև պաշտպանական համակարգի համար աշխատանքների իրականացումը և մասնակցությունը պետական պատվերի ձևավորմանը և կատարմանը», - ասաց Ռաֆիկ Արամյանը:

Ռաֆիկ Արամյանը ծնվել է 1962 թ.՝ Աշտարակ քաղաքում: 1978-1983 թթ. սովոր-

ել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում: 1984-1987 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտի ասպիրանտ: 1988 թ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ստեկլովի անվան մաթեմատիկայի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը, 2010 թ. Երևանի պետական համալսարանում՝ դոկտորական ատենախոսությունը: 2013 թ. ստացել է պրոֆեսորի կոչում: 2021 թ. նրան շնորհվել է Հայ-Ռուսական համալսարանի վաստակավոր պրոֆեսորի կոչում:

Ռաֆիկ Արամյանն ավելի քան 50 գիտական հրապարակման և միջնակարգ դպրոցի 3 դասագրքերի հեղինակ է: Նա «Journal of Mathematical Sciences», «American Journal of Applied Mathematics» և «Advances in Pure Mathematics» ամսագրերի խմբագրական խորհրդի, Հայկական մաթեմատիկական միության, Աթենքի կրթության և հետազոտությունների ակադեմիայի (ATINER) անդամ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց Մագնիսական և գերհաղորդիչ նյութերի 13-րդ միջազգային գիտաժողովը



Ս/թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Մագնիսական և գերհաղորդիչ նյութերի միջազգային 13-րդ գիտաժողովը (MSM25):

MSM25 գիտաժողովի շրջանակներում ներկայացվեցին մագնիսական, գերհաղորդիչ և հարակից նյութերի հետազոտության և կիրառման վերաբերյալ վերջին նվաճումները:

Քառօրյա գիտաժողովի ընթացքում պլենար և հրավիրված զեկուցումներով հանդես եկան միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ՝ պրոֆեսոր Դարիուս Կազարովսկին (Ցածր ջերմաստիճանի և կառուցվածքային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, Լեհաստան), պրոֆեսոր Բիլալ Գյոկցեն (Վուպերթալի համալսարան), դոկտոր Լաուրա Գրինը (Ֆլորիդայի պետական համալսարան), պրոֆեսոր Ուլֆ Վալդվոլդը (Դուիսբուրգ-Էսսենի համալսարան), պրոֆեսոր Կարեն Մարտիրոսյանը (Տեխասի Ռիո Գրանդե Վելի համալսարան), պրոֆեսոր Կոնստանտին Արուստունովը (ՌԳԱ, Կապիցայի ինստիտուտ), պրոֆեսոր Անդրեյ Ռոզակը (Եվրոպական Սինքրոտրոն) և այլք:

Գիտաժողովի ընթացքում մագնիսականության և գերհաղորդականության վերաբերյալ քննարկվեցին շուրջ քսան թեմաներ:

Գիտաժողովի վերջում մրցանակներ հանձնվեցին բանավոր և ստեղծարարական լավագույն զեկուցումների համար:

MSM միջազգային գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Ս/թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Լազերային ֆիզիկա 2025» (LP-2025) միջազգային գիտաժողովը, որը համախմբել էր գիտնականների, երիտասարդ հետազոտողների տարբեր երկրներից: Գիտաժողովի նպատակն էր քննարկել լազերային ֆիզիկայի բոլոր ոլորտներում վերջին նվաճումները, ներկայացնել նոր գաղափարներ և իրականացնել փորձի փոխանակում:

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը ՀՀ ԿԳՄԱՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, ՀՀ ԳԱԱ-ի, «IPR Armenia» Optica-ի ուսանողական մասնաճյուղի աջակցությամբ:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Պավել Մուժիկյանը: «Մենք ուրախ ենք հյուրընկալել աշխարհի տարբեր երկրներից ժամանած գիտնականների, հետազոտողների և փորձագետների: Այս տարի մեր հանդիպումը ձեռք է բերում հատուկ նշանակություն: Այն անցկացվում է Քվանտային գիտության և տեխնոլոգիայի միջազգային տարվա (IYQ 2025) շրջանակում, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայտարարել է քվանտային մեխանիկայի զարգացման 100-ամյակի կապակցությամբ: Մեկ դար առաջ Վերներ Հայզենբերգը իր «Սոմեթունգ» հոդվածում դրեց քվանտային մեխանիկայի հիմքերը: Այս նորարարական աշխատանքը ոչ միայն հեղափոխեց տիեզերքի մեր ըմկալումը, այլև խորապես վերափոխեց ժամանակակից գիտությունն ու առօրյա կյանքը: Եվ այս գիտաժողովը կդառնա հարթակ՝ ներկայացնելու նոր արդյունքներ և ստեղծելու նոր գիտական կապեր», - ասաց Պավել Մուժիկյանը:

«Լազերային ֆիզիկա 2025» միջազգային գիտաժողովը



ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Պապոյանը նշեց, որ ՀՀ կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում գիտության և տեխնոլոգիայի այս ոլորտին: «Գիտության և տեխնոլոգիաների զարգացման խորհուրդը, որը նախագահում է ՀՀ վարչապետը, քվանտային տեխնոլոգիաները ներառել է այն հինգ ոլորտների շարքում, որոնցում Հայաստանը, ինչպես ակնկալվում է, առաջընթաց կգրանցի առաջիկա տարիներին: Մենք կունենանք ավելի շատ հնարավորություններ ինտենսիվ համագործակցության և ավելի շատ արդյունքների համար, և Հայաստանը կդառնա ավելի գրավիչ մեր միջազգային գործընկերների համար», - ասաց Արամ Պապոյանը:

Գիտաժողովի աշխատանքներն այնուհետև շարունակվեցին Աշտարակում՝ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում: Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին զեկուցումներ, որոնք վերաբերում էին լազերային ֆիզիկայի տարբեր ոլորտներին առնչվող հարցերի:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին



Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտը մտահոգություն և տագնապ է հայտնել Հարավային Կովկասի տարածաշրջանում հայերի ցեղասպանության սպառնալիքի առնչությամբ՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև «խաղաղության համաձայնագրի» հռչակման ֆոնին:

«ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի միջնորդությամբ կնքված համադադարի հռչակագրի ներկայիս լրատվամիջոցների լուսաբանումը և դիվանագիտական ընդունելությունը խաղաղության վաղաժամ տոնակատարություն են, մինչդեռ Ադրբեջանի վերջին զանգվածային հանցագործությունները և շարունակական ագրեսիան անպատասխան են մնում: Իրականում հայտարարված համաձայնագիրը կարող է հեշտությամբ նոր պատերազմի և ավերածությունների հանգեցնել և հայերի դեմ Ադրբեջանի հետագա ցեղասպանական գործողությունների համար պայմաններ ստեղծել», - ասված է ինստիտուտի հայտարարության մեջ:

Ինստիտուտը հիշեցնում է, որ Ադրբեջանը 2020-2023 թվականներին ցեղասպանություն է իրականացրել արցախահայերի նկատմամբ՝ օգտագործելով սպանություններ, կյանքից զրկումներ, շրջափակում, սով, հարկադրի տեղահանում, մշակութային ժառանգության ոչնչացում, և նրա գործողություններին աջակցել են Թուրքիան և Իսրայելը:

«Օգոստոսի 8-ի համաձայնագիրը չի անդադարեցնում Ադրբեջանում նախագահ Ալիևի ռեժիմի շարունակական ցեղասպան բնույթի, հայկական տարածքների օկուպացիային, հայկական մշակութային ժառանգության ճակատագրին, Արցախի Հանրապետության կարգավիճակին, Արցախից տեղահանված անձանց իրավունքներին, հայ ռազմագերիների և ադրբեջանական բանտերում պահվող Արցախի նախկին քաղաքական

առաջնորդների ճակատագրին կամ անցյալում մարդու իրավունքների խախտումների հետաքննության մեխանիզմներին:

Իրականում վերջին կետերի վերաբերյալ համատեղ հռչակագիրն ուղղակիորեն խաթարում է անցյալում խախտումների հետաքննության ջանքերը՝ ստիպելով Հայաստանին հրաժարվել միջազգային դատարաններում Ադրբեջանի դեմ ընթացող գործերից... Այս իրավական գործընթացները կարևոր են տարածաշրջանում խաղաղության համար: Այս պահին դրանք միակ իրավական մեխանիզմն են, որը կարող է հաստատել ճշմարտությունն ու երկու կողմերի պատասխանատվությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ տասնամյակներ տևած պատերազմի և լարվածության համար: Հայաստանը՝ որպես ադրբեջանական ագրեսիայի և ատելության զոհ, շատ ավելի ուժեղ իրավական դիրքում է: Ահա թե ինչու Ադրբեջանը ձգտում էր ապահովել, որ այս գործերը դադարեցվեն «խաղաղության» համաձայնագրի շրջանակում», - ասված է հետազոտության մեջ:

Լեմկինի ինստիտուտի փորձագետները ենթադրում են, որ Ադրբեջանի համար խաղաղության համաձայնագիրը գործիք է ծառայում՝ էքսպանսիոնիստական և հակահայկական օրակարգն առաջ մղելու համար, և բնավ հաշտեցման իրական ուղի չէ: Օրինակ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարմանը ձգտելով՝ Ադրբեջանը ձգտում է ամրապնդել և օրինականացնել Արցախում տեղի ունեցած ցեղասպանության հետևանքները: Հայաստանին ստիպելով խնդրել Մինսկի խմբի լուծարումը՝ Ադրբեջանը վերացնում է արցախահայերի իրավունքները ճանաչող միակ դիվանագիտական մեխանիզմը:

«Բացի դրանից, պահանջելով «Ազատ աջակցության մասին» օրենքի 907-րդ ուղղման չեղարկում, որը նախկինում արգելափակում էր մարդու իրավունքները խախտող Ադրբեջանին տրամադրվող օգնությունը, Ադրբեջանն ապահովել է ամերիկյան ուղղակի օգնության, ներառյալ ռազմական օգնության հոսքը: 907-րդ

ուղղման կասեցումն Ադրբեջանի համար նշանակալի փառաշահ է, քանի որ այն վերացնում է նրա՝ որպես մարդու իրավունքները խախտող կարգավիճակի մի քանի նշաններից մեկը», - նշում է ինստիտուտը:

Ինստիտուտի փորձագետների կարծիքով Ադրբեջանն արդեն իսկ ցույց է տվել իր մտադրությունը՝ օգտագործել համաձայնագիրը հայկական պետությունը թուլացնելու և նրա ինքնիշխանությունը խաթարելու համար: Ալիևը պահանջում է, որ Հայաստանը փոխի սահմանադրությունը՝ պնդելով, որ նախաբանը տարածքային պահանջներ է պարունակում Արցախի նկատմամբ, որը նա համարում է Ադրբեջանի մաս, չնայած մինչև 2023 թվականը Բաքուն երբեք ուղղակիորեն չի կառավարել տարածաշրջանը:

«Հաշվի առնելով, որ Ալիևը պահանջներ է ներկայացնում, Հայաստանը կարող էր նույնն անել: Հայաստանը չնայած ռազմական, տնտեսական և աշխարհաքաղաքական ուժի առումով ավելի թույլ կողմ է, տիրապետում է այն հողին, որով անցնելու է նախատեսված առևտրային միջանցքը: Հայաստանը երկկողմ համաձայնագիր է ստորագրել Թրամփի վարչակազմի հետ, և Միացյալ Նահանգները կշահի այս միջանցքից: Հայաստանը կարող է հրապարակադրել ներկայացնել իր պահանջները՝ հայ ռազմագերիների և քաղաքական գերության անհապաղ և անվերապահ վերադարձը, 2020 և 2023 թվականներին Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով պատճառված վնասի փոխհատուցումը, հայերի վերադարձը Արցախ, մշակութային ժառանգության և ավերված պատմական վայրերի պաշտպանությունն ու վերականգնումը: Այդ հարցերի ամենամեծ խաթարումն է Հայաստանի անվտանգությունը և տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղությունը», - կարծում են ինստիտուտում:

Նշվում է նաև, որ ազգային անվտանգության հարցերն անտեսելուց զատ, համաձայնագիրը վերացնում է երրորդ կողմերի ներկայությունը ընդհանուր սահ-

մանների երկայնքով, ինչը կթուլացնի Հայաստանի դիրքերը և օգուտներ կբերի Ադրբեջանին: Դա վերաբերում է Իրանի հետ սահմանի տեղակայված ռուսական ուժերին և Ադրբեջանի հետ սահմանին գտնվող ԵՄ առաքելությանը:

Ինստիտուտում կարծում են, որ Հայաստանի անվտանգության արմատական վերակողմնորոշումը դեպի Միացյալ Նահանգները լրացուցիչ ռիսկեր է ստեղծում: Համաձայնագիրը սպառնում է Ռուսաստանի և Իրանի շահերին, որոնք կարևոր են Հայաստանի անվտանգության համար:

«Միացյալ Նահանգները տնտեսապես և ռազմավարական առումով հետաքրքրված է «Ջանգեզուրի միջանցքով», որը կվերանվանվի «Միջազգային խաղաղության և բարգավաճման Թրամփի ճանապարհ» (TRIPP): Միացյալ Նահանգները մենաշնորհի կստանա դեպի Կասպից ծով և Կենտրոնական Ասիայի ռեսուրսների միջանցքի զարգացման հարցում, ինչը նրան հնարավորություն կտա մարտահրավեր նետելու Ռուսաստանի և Չինաստանի ազդեցությանը», - համարում են Ինստիտուտում՝ հավելելով, որ պարզ չէ, թե Թրամփի վարչակազմը որքանով է հասկանում Ադրբեջանից սպառնացող վտանգները:

Լեմկինի ինստիտուտը նախագահ Թրամփին կոչ է անում դիվանագիտության միջոցով Ալիևին ստիպել որոշակի քայլեր ձեռնարկել հայերի և Հայաստանի իրավունքները հարգելու համար: Կարևոր քայլ է բոլոր հայ բանտարկյալների և պատանդների անհապաղ և անվերապահ ազատ արձակումը:

Այլ միջոցառումներից են Ադրբեջանի հակահայկական կրթական համակարգի բարեփոխումը, ցեղասպանական հեռուստաբանությունների արգելումը, «Արևմտյան Ադրբեջանի» գաղափարախոսությունից հրաժարումը և Արցախի ապագայի շուրջ բանակցությունները՝ 3000-ամյա հայկական ներկայության ճանաչմամբ...



Ազդեցության բարձր գործակից ունեցող «Nature Partner Journals-Heritage Science» սկոպուսյան ամսագրում լույս է տեսել հայ գիտնականների «Վիշապաքարերը որպես Հայկական լեռնաշխարհի պաշտամունքային նախապատմական հուշարձաններ. տվյալների վերլուծություն և մեկնություն» հոդվածը:

Հեղինակներն են Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի Կոստոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոնի ղեկավար պրոֆեսոր Վահագն Գուրզադյանը, ում հետազոտությունները նվիրված են աստղագիտական տվյալների և պատմական ժամանակագրություններին և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն պատմական գիտությունների դոկտոր Արսեն Բորիսյանը, ով վերջին

Հայ գիտնականների՝ հնագույն վիշապաքարերի ուսումնասիրության մասին նոր հոդվածը միջազգային հեղինակավոր ամսագրում

տասնամյակում ղեկավարել է վիշապաքարերին նվիրված լայնածավալ հետազոտությունները:

Հոդվածում ներկայացված են հեղինակների կողմից կատարված վիշապաքարերի չափերի և տեղադրման բարձրության բաշխումների առաջին վիճակագրական վերլուծության արդյունքները: Դրանք, ըստ Վ. Գուրզադյանի, հաստատում են այն վարկածը, որ վիշապները սերտորեն կապված են եղել ջրի հնագույն պաշտամունքի հետ, քանի որ հիմնականում տեղակայված են ջրի բարձրլեռնային աղբյուրների մոտ և գտնվում են նախապատմական ոռոգման համակարգերին կից: Ավելին, դրանք բարձրությունների անսպասելի բի-մոդալ (կրկնակի էքստրեմումով) բաշխումը ենթադրում է տեղադրման հատուկ ձևեր՝ կապված մարդկային սեզոնային գործունեության և պաշտամունքային սովորույթների հետ:

Ա. Բորիսյանի համոզմամբ հետազոտությունը նպաստում է վիշապ-կոթողների խորհրդանշական և ֆունկցիոնալ նշանակության ավելի խոր ըմբռնմանը նախապատմական սոցիալական և կրոնական համա-

կարգերի համատեքստում:

Հետազոտությունն իրականացվել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հովանավորած «Զրոգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» հետազոտական նախագծի շրջանակներում:

Վիշապաքարերը ձկնակերպ, ցլակերպ կամ ձկնացլակերպ պաշտամունքային հուշարձաններ են, որոնք հայտնի են միայն Հայկական լեռնաշխարհում: Այս քարակոթողները հայտնաբերվել են Արագածի լանջերին, Գեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիսարևելյան ափերին, ճորոխ գետի ավազանում և այլուր: Կերտվել են միակտոր քարից, սովորաբար դրվել են աղբյուրների ակունքների, ջրանցքների, ջրամբարների, արհեստական լճերի մոտակայքում: Այդ քարակոթողները եղել են երկրագործությունն ու ոռոգումը հովանավորող, ջրի պաշտամունքն անձնավորող հնագույն աստվածությունների խորհրդանիշեր:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

Ավագ դասարանների աշակերտների համար իրականացվեց «Ամառային գիտական դպրոց» ծրագիրը

Դպրոցների ավագ դասարանների աշակերտների համար իրականացվեց «Ամառային գիտական դպրոց» ծրագիրը: Այն կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի հետ համատեղ:

Ավելի քան 30 դպրոցական, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաները, մեկ ամսվա ընթացքում այցելեցին ԳԱԱ 8 գիտական կազմակերպություն, ծանոթացան դրանց գործունեությանը, կատարեցին փորձեր և մասնակցեցին պեղումների Կաքավաձորում և Եղեգնաձորում:

«Ամառային գիտական դպրոց»-ը մեկնարկեց հուլիսի 16-ին ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում: Աշակերտներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Պավել Մուժիկյանը և ՀՀ ԳԱԱ միջազգային կապերի բաժնի ղեկավար Սոֆի Աժեմյանը:

Ինչո՞ւ են մարդու աչքերը, ականջները երկուսը, իսկ քիթը՝ մեկը, ինչպե՞ս են «շարժվում» ռադիոալիքները, ի՞նչ է լազերային ճառագայթը, և ինչպե՞ս է ուղեղը «տեսնում» ծավալային նկարը: Դպրոցի մասնակիցները գիտնականների հետ միասին փնտրեցին այդ և տասնյակ այլ հարցերի պատասխաններ, կատարեցին փորձեր: Ամենաակտիվներն ինստիտուտի կողմից նվեր ստացան ֆիզիկայի վերաբերյալ գրքեր:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտատարադրական կենտրոնում աշակերտները ծանոթացան «Նարինե» կաթնաթթվային մթերքի ստացման տեխնոլոգիային: Դպրոցականներն ինքնուրույն որոշեցին տարբեր նյութերի pH-ը, բացահայտեցին տեթրային յուղերի գաղտնիքը, լսեցին դասախոսություններ միկրոօրգանիզմների հիման վրա էկոլոգիապես մաքուր կենսապարարտանյութերի ստեղծման մասին, տեղեկացան, որ Հայաստանում է պահվում աշխարհի միկրոօրգանիզմների ամենաընդգրկուն հավաքածուներից մեկը՝ 200 տեսակի 12 000 շտամ, որոնցից յուրաքանչյուրն իր բացառիկ «անձնագիրն» ունի:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատողների հետ աշակերտները պեղումներ անցկացրին Արագածոտնի մարզի Կաքավաձոր բնակավայրում: Ծանոթացան Արագած լեռան լանջերի քարանձավային բնակավայրերին, ժայռապատկերներին: Վերջերս հնագետներն այստեղ գտնել են ուղղանկյուն սենյակներ հայտնաբերեցին: Ըստ հնագետ Բորիս Գասպարյանի. «Այսպիսի տարածքներն անվանում են պաշտամունքային լանդշաֆտ: Այստեղ ամեն քայլափոխի արտեֆակտ է»:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էվոլյուցիոն գենոմիկայի լաբորատորիայի վարիչ Լևոն Եփիսկոպոսյանը հանդես եկավ Եղեգնաձոր քաղաքի մոտակայքում գտնվող էնեոլիթյան բնակատեղիի (Պղնձի դարաշրջան) մասին դասախոսությամբ:

Երեխաները Եղեգնաձորում տեսան պեղումների աշխատանքների ամբողջ ցիկլը, թե ինչպես են մանրացվում քարերը, մաղվում հողը և վերլուծվում գտածոները: Ամենահամարձակներն իրենց հնագետների դերում փորձեցին, այնուհետև դաշտային լաբորատորիա այցելեցին: Սեղաններին՝ սերմեր, ոսկորներ, կավե իրերի բեկորներ: Իմացան, թե ինչպես են ոսկորներից դուրս բերում ԴՆԹ-ն, որոշում ամինաթթվային կազմը և իմանում, թե ում մնացորդներն են դրանք:

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ այցի շրջանակներում աշակերտները ե-



ղան Երևանի բուսաբանական այգում և Էկոպիկենտրոնում: Իմացան, թե բուսաբաններն ինչպես են պայքարում ամռան տապի և խստաշունչ ծնունդի դեմ, որպեսզի պահպանեն կանաչ հարստությունը:

Ինստիտուտի առաջատար մասնագետ Մարգարիտա Ղարիբյանի կազմակերպած խաղի միջոցով սովորեցին բույսերի անունները: Հատկապես երեխաներին դուր եկան այն բույսերը, որոնք Մարգարիտա Ղարիբյանն անվանում էր «սերոտոնինային թերապիա»՝ մարդկանց տրամադրության վրա դրականորեն ազդելու ունակության համար:

ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում գիտաշխատող Ռոբստամ Զախարյանի դասընթացի շնորհիվ տեղեկացան, թե ինչ է գենը, և ինչպես է այն կառավարում սպիտակուցների սինթեզը, տեսան, թե ինչպես են այդ տեսական գիտելիքները կիրառվում գործնականում՝ դեղամիջոցների մշակման, մուտագենների ուսումնասիրության և նոր կենսաբժշկական լուծումների ստեղծման մեջ:

Գիտնականների հսկողության ներքո դպրոցականները փորձեր իրականացրին:

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը պատմեց աստղադիտակների և կարմիր հսկաների մասին, բացատրեց, թե ինչ է միջառարկայականությունը, որով վաղուց սկսել են զբաղվել աստղագետները՝ աստղակենսաբանություն, աստղաերկրաբանություն, աստղաքիմիա, ներկայացրեց աստղադիտակները: Այնուհետև դպրոցականներն այցելեցին Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարան, ծանոթացան նրա գործունեությանը և աշխատանքային պայմաններին:

ՀՀ ԳԱԱ Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանական թանգարանի համաբանության սրահում աշակերտները տեսան երկնաքար, ծանոթացան հազվագյուտ ապարներին, որոնք ուլտրամանուշակագույն երկար և կարճ ալիքների ազդեցությամբ ներկվում են սառը կապույտից մինչև վառ մարմնագույն երանգներով: Հնաբանության սրահում տեսան նախապատմական փղի հսկայական ոսկորներ: Մասնակիցները դասախոսություն լսեցին, թե ինչու են անհետացել դինոզավրերը, և ինչ հետևանքների կարող է հանգեցնել կլիմայի փոփոխությունը:

Ամառային դպրոցն ավարտվեց օգոստոսի 22-ին Երևանում պարգևատրման հանդիսավոր արարողությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՎԵՐՋԵՐՍ կյանքից հեռացավ բուլղարահայ լեգենդար ծանրորդ Նորայր Նուրիկյանը: Ծնվել է 1948 թվականի հուլիսի 26-ին Բուլղարիայի Սլիվեն քաղաքում: Նա դարձել է ուժի, համառության և մարզական արժանապատվության խորհրդանիշ: Նրա ճանապարհը դեպի սպորտի բարձունքներ սկսվել է լեգենդար մարզիչ Իվան Աբաջիկի ղեկավարությամբ, ով պատանի Նորայրի մեջ նկատել է չեմպիոնի ներուժը:

Արդեն 1969 թվականին Նուրիկյանն իր նորամուտը նշել է Եվրոպայի առաջնությունում՝ նվաճելով բրոնզե մեդալ: Բայց իսկական հաղթանակ գրանցվել է 1972 թվականին Մյունխենի օլիմպիական խաղերում, որտեղ խորհրդային մարզիկ Դիտո Շանիժեի հետ պայքարում Նորայրը դարձել է օլիմպիական չեմպիոն և սահմանել համաշխարհային ռեկորդ: Չորս տարի անց Մոնրեալում նա կրկնել է հաջողությունն արդեն թեթևաշաշին կարգում՝ կրկին դառնալով չեմպիոն և ռեկորդակիր:

Նուրիկյանը ոչ միայն մարզիկ էր, այլև ֆիզիկական

Մեր հայտնի և անհայտ հայրենակիցները. Նորայր Նուրիկյան



և հոգեբանական արգելքները հաղթահարած մարդ: 1972 թվականին դաստակի վնասվածքը չի խանգարել նրան. նա շարունակել է մարզվել և վերադարձել է հաղթակապելի ուժեղ, քան նախկինում: Նրա բնավորությունը, կարգապահությունն ու ինքնավստահությունն օրինակ են դարձել մարզիկների բազմաթիվ սերունդների համար:

1977 թվականին՝ կարիերան ավարտելուց հետո, Նուրիկյանը նվիրվել է մարզչական և վարչական աշխատանքին: Նա եղել է Աբաջիկի օգնականը, այնուհետև գլխավորել է Բուլղարիայի հավաքականը, իսկ ավելի ուշ դարձել Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի փոխնախագահ: Նա արժանացել է բազմաթիվ մրցանակների, այդ թվում՝ «Ստարա Պլանինա» շքանշանի և Բուլղարիայի Աշխատանքի հերոսի կոչման:

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Անահիտ Չարենց - ...Գիրս մնա հիշատակող. գրականագիտական ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու:

2. Անուշ Ասլիբեկյան - Վիլյամ Սարոյանի դրամատուրգիայի բնույթը և հայ բեմը:

3. Ալբերտ Պապյան - Տավուշի բառաշխարհի բառարան:

4. Զինաիդա Բալայան - Արցախի XIX դարի հայ գրականության մեջ:

5. «Ակադեմիկոս Սերգեյ Սարինյան -100 (գիտաժողովի նյութերի ժողովածու)»:

6. Հեղ. խումբ - Актуальные проблемы механики сплошной среды (сборник научных трудов).

7. «Գրականագիտական հանդես», 2025 թ., N 1:

8. «Լեզու և լեզվաբանություն», 2025 թ., N 1:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Սուրճ. դրական և բացասական կողմերը*

Կոֆեինն աշխարհում ամենատարածված հոգեակտիվ միացությունն է, գրում է «The Conversation» ամսագիրը: Նույնիսկ եթե դուք չեք սիրում սուրճ, դուք հաստատ կանոնավոր օգտագործում եք այդ նյութը, քանի որ այն համդիպում է գրեթե ամենուր. գազավորված խմիչքներից և մրսածության դեմ միջոցներից մինչև շոկոլադե և «սուրճ առանց կոֆեինի»:

Բժշկությունը մեծահասակներին խորհուրդ է տալիս օրվա մեջ օգտագործել 400 մգ կոֆեինից ոչ ավելի. դա մոտավորապես սուրճի 4 փոքր բաժակ է: Բաժնեչափի մեծացումը կարող է առաջացնել մկանների դող, գլխացավ, սրտխափոցի ուժեղացում, ծանր դեպքերում՝ նաև սրտխառնոց: Բայց և սուրճի նորմալ բաժնեչափից մեք կարող ենք զգալ նրա բացասական ազդեցությունը՝ բարձր զրգուշականություն, քնելու դժվարություններ... Սակայն օրվա առաջին կեսին խմած սուրճը չի ազդում երեկոյան քնելու վրա: Կոֆեինը դանդաղեցնում է մեկատոնինի արտադրությունը, որը բազմաթիվ ֆունկցիաներ ունի, այդ թվում՝ հակաճնշիչ ազդեցություն, ինչպես նաև բարդ կենսաբանական միացությունների, այդ թվում՝ ԴՆԹ-ի պաշտպանություն մուտացիաներից:

Կոֆեինը կապված է նաև ընդհանուր նյարդայնության մեծացման հետ, դրա համար էլ սուրճից հրաժարվելը լավացնում է քնի ամենակարևոր փուլը՝ խոր քուն առանց երազների, երբ ուղեղը լրիվ հանգստանում է: Այդ միացության անցանկալի հատկություններից մեկն էլ ստամոքսա-հյութի թթվայնության բարձրացումն է և այն մկանների թուլացումը, որոնք արգելակում են ստամոքսա-հյութի անցումը կերակրափող: Սուրճը հաճախացնում է անոթազարկը և բարձրացնում արյան ճնշումը: Բայց շատ տարիներ օգտագործելուց հետո սուրճից հրաժարվելը կարող է սկզբում խախտել այդ ցուցանիշների կայացած համակարգի կարգավորումը, և այն ոչ անմիջապես կվերադառնա բնականոն վիճակին:

Ուրեմն ի՞նչ. հրաժարվե՞լ կոֆեինից: Դա այնքան էլ



հեշտ չէ՝ հաշվի առնելով, թե որքան շատ է այն օգտագործվում կենցաղում: Բայց խնդիրը նաև մեր օրգանիզմի կենսաքիմիայի մեջ է: Եթե դուք լուրջ որոշել եք թողնել սուրճ խմելը, դա պետք է արվի աստիճանաբար, մի քանի շաբաթվա ընթացքում, և սկզբնական շրջանում կարիք կլինի դիմաճակ հաճախացած գլխացավին և ճնշող հոգնածությանը:

1991-2011 թթ. Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՅԿ) համարում էր, որ սուրճը կարող է չարորակ ուռուցքային գործոն լինել: Հետո հաջորդեցին քննարկումների և տարակուսանքների 5 տարիներ, և կուտակված գիտական գրականության ամփոփումը համեց այդ մեղադրանքը, որի մասին ԱՅԿ-ն հայտարարեց 2016 թ. հունիսի 15-ին: 2014-2015 թթ. կատարված մետաանալիզը (այսինքն՝ այդ թեմայով հրապարակված գիտական տվյալների ընդհանուր դիտարկումը) ցույց տվեց, որ սուրճի չափավոր օգտագործումն իջեցնում է մահացությունը բոլոր պատճառներից, նույնիսկ ավտոաղետներից և մկազեցնում է լուրջ հիվանդություններով հիվանդանալու հնարավոր վտանգը, ինչպիսիք են սիրտ-անոթային հիվանդությունները, պարկինսոնիզմը, շաքարախտը: Իշնում են նաև չարորակ ուռուցքների (հատկապես լյարդի) և այն հիվանդությունների հաճախականությունները, որոնք առաջանում են մեր օրգանիզմում արտադրվող որոշ օգտակար միացությունների օքսիդացումային քայքայումից:

Կարևոր է նշել, որ սուրճը (մյուս խմիչքներն էլ) չպետք է 60 °C-ից տաք լինեն, այրվածքը կարող է բերանի խոռոչի և կերակրափողի էպիթելի բջիջների ուռուցքածին վերափոխում առաջացնել: Իսկ այլ հակացուցումներ չկան:

Նյու Յորքը սուզվում է



Ամերիկացի երկրաբաններն անհանգստացած են ԱՄՆ-ի խոշորագույն քաղաքի՝ աստիճանաբար գետնի մեջ ընկղմվելուց: Հենքերի ընդհանուր զանգվածը 760 միլիոն տոննա է, և յուրաքանչյուր տարի դրանք «թաղվում» են հո-

դի մեջ մեկ-երկու միլիմետր: Հյուսիսային Ամերիկայի ատլանտյան ափի որոշ գոտիներում հողի մակարդակի իջեցումը տարվա ընթացքում կազմում է 5 մմ և ավելի, այն դեպքում, երբ օվկիանոսի միջին մակարդակը, կապված արևադարձային սառույցների հալվելու հետ, ամեն տարի բարձրանում է 4 մմ-ով: Այս բոլոր տվյալները ստացվել են արբանյակների վրա տեղադրված լազերային բարձրաչափների միջոցով:

Թեքված աշտարակներ

Լայնորեն հայտնի է Պիզայի «ընկնող» աշտարակը,




բայց քչերն են լսել իտալական մեկ այլ քաղաքում՝ Բոլոնիայում, ոչ պակաս տպավորիչ թեքված աշտարակների մասին: Դրանք շատ ավելի հին են, մոտավորապես հազար տարեկան: Մեկի բարձրությունը 48 մետր է, մյուսինը՝ 97,2 մետր: Դրանք հայտնվել են երկու հարուստ ընտանիքների մրցակցության արդյունքում, թե ով ավելի բարձր կկառուցի: Քաղաքում եղել են և ուրիշ համանման շենքեր, բայց մինչև մեր օրերը չեն հասել: Այժմ երկու աշտարակներն էլ անվտանգության համար ցանկապատված են, և սկսվել է վերանորոգում, որը մոտավոր հաշվարկներով կտևի 10 տարուց ոչ պակաս:

Ժամանակին Դանթե Ալիգիերին այնքան էր հմայվել այդ աշտարակներով, որ իր «Անտվածային կատակերգության» մեջ անդրադարձել է դրանց ցնցող տպավորությանը:

*«Գիտության աշխարհում», N 2, 2025 թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵԳԱՄ-ը հայտարարում է «Վերապատրաստման ծրագիր երիտասարդ գիտնականների համար» մրցույթ

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» հայտարարում է «Վերապատրաստման ծրագիր երիտասարդ գիտնականների համար» մրցույթ:

Մրցույթի շրջանակում դրամաշնորհներ կտրամադրվեն երիտասարդ գիտնականներին՝

արտասահմանյան գիտահետազոտական կենտրոններում մասնագիտական վերապատրաստման և մեթոդաբանական գիտելիքի խորացմանն ուղղված դասընթացների մասնակցության համար: Մրցույթն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներով և մասնագիտություններով:

Մրցույթի հիմնական նպատակներն են.

- երիտասարդ գիտնականների համար հասանելի դարձնել արտասահմանյան առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստվելու հնարավորությունը,
- հնարավորություն ընձեռել երիտասարդ գիտնականներին՝ մասնակցելու իրենց ոլորտի նորարարական մեթոդների և մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ուղղված դասընթացներին,
- աջակցել երիտասարդ գիտնականների մասնագիտական որակավորման բարձրացմանը,
- նպաստել ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:

Վերապատրաստման մրցույթի շրջանակում նախատեսվում է ֆինանսավորում տրամադրել չորս ենթածրագրով:

Առաջին ենթածրագրով նախատեսվում է ֆինանսավորման տրամադրում երիտասարդ գիտնականներին արտասահմանյան գիտական կենտրոններում վերապատրաստման համար:

Երկրորդ ենթածրագրով նախատեսվում է ֆինանսավորման տրամադրում արտասահմանյան գիտական կենտրոններում գիտական ստորաբաժանումների երիտասարդ ղեկավարների մասնագիտական վերապատրաստման և հմտությունների կատարելագործման համար:

Երրորդ ենթածրագրով նախատեսվում է ֆինանսավորման տրամադրում արտասահմանյան կազմակերպություններում ժամանակակից սարքեր-սարքավորումների վրա աշխատելու հմտությունների կատարելագործման համար:

Այս երեք ենթածրագրերով հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2025 թ. հոկտեմբերի 20-ը, իսկ ֆինանսավորման առավելագույն չափը՝ 4.000.000 ՀՀ դրամ:

Չորրորդ ենթածրագրով նախատեսվում է ֆինանսական աջակցության տրամադրում երիտասարդ գիտնականների՝ արտասահմանյան մասնագիտացված կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացներին (կարճատև կուրսեր, աշխատաժողովներ, սեզոնային դպրոցներ) մասնակցության համար: Այս ենթածրագրով մրցույթին դիմելու վերջնաժամկետն է 2025 թ. նոյեմբերի 3-ը, իսկ ֆինանսավորման առավելագույն չափը՝ 1.500.000 ՀՀ դրամ:

Մրցույթի արդյունքները նախատեսվում է ամփոփել մինչև 2025 թ. նոյեմբերի 30-ը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվության և հանրային կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ կենտրոնի ՄՄՌ սպեկտրոսկոպիայի լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «Գիտական կադրերի ատեստավորման կարգը, գիտական կազմակերպություններում գիտական և ծարտարագիտատեխնիկական պաշտոնները և դրանց գնահատման նվազագույն չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 30 հունվարի 2025 թվականի N 102-Ն որոշման՝ մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտություններին բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան,

2) ունի գիտական, գիտատեխնիկական կամ գիտակրթական առնվազն յոթ տարվա աշխատանքային ստաժ,

3) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) համահեղինակել է բնական գիտությունների մասնագիտություններով առնվազն վեց հրապարակում ՄԳՀ-ում,

4) վերջին հինգ տարիների ընթացքում (չհաշված զինվորական ծառայության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածները) բնական գիտությունների մասնագիտություններով ՄԳՀ-ում ընդգրկված հոդվածներից առնվազն չորսուն հանդես է գալիս որպես առաջին, վերջին կամ գրագրություն պահպանող հեղինակ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում՝ ուղղված ինստիտուտի տնօրենին,
- բ) ինքնակենսագրություն,
- գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լրացված,
- դ) լուսանկար (2 հատ),
- ե) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
- զ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- է) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերի պատճենները,
- ը) հրատարակված գիտական աշխատանքների ցանկը,
- թ) բնութագիր վերջին աշխատավայրից,
- ժ) տեղեկանք մշտական բնակության վայրից:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Ազատության 26, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն (գիտական քարտուղարին), հեռ. +374 10-28-52-91:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16 Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 25.09.2025 թ.: Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: